

891.99
P-97

ԿԱՐԱԴԵՏ ԲՈՒՐՉԱԲԵՆԱՆ

153
08 DEC 2011

Բ Ա Ր Ե Գ Ո Ւ Թ Ը

Պ Ա Տ Կ Ե Ր

Ի Ր Ը Կ Ը Ն Կ Ե Ը Ն Գ Ի Ց

Տպարան «ՇԻՐԱԿ» Այլեքսանդրապոլ

1911

(101)

891.99
F-97

891.99

բ-37


01 JAN 2009

ԿԱՐԱԴԵՏ ԲՈՒՐՉԱԲԼԵԱՆ

Բ Ա Ր Ե Գ Ո Ւ Թ Ը

Պ Օ Տ Կ Ե Ր

Ի Ր Ե Կ Ե Ն Գ Ե Ն Գ Ի Ց



Տպարան «ՇԻՐԱԿ» Ալեքսանդրապոլ

1911

11.03.2013

24492

ԲԱՐԵՓՈՒԹԸ

Պատկեր իրական կեանքից

I

Իր հնացած ու պատառոտած վերարկուի մէջ փաթաթւած՝ խրճիթի մի անկիւնն էր կրծկել Վարպետ Յակոբը և անվերջ մտածում էր կեանքի պատահական ծանր արկածների մասին. տալիս ու առնում էր օրւայ շարիքը, իրեն հասած դառնագին վիշտն ու կսկիծը:

Վարպետ Յակոբն էլ շատերի նման ցաւի ու պակասութեան տէր մարդ էր. նրա ամբողջ կեանքը եղել էր անմխիթար: Նա ամեն անգամ, երբ մի սոսկալի շարիքի էր հանդիպում, խոնարհութեամբ տանում էր այն, աւարկելով, որ իր բախտն ու ճակատագիրը այդ է եղել:

Վարպետը թէև ժամանակի ընթացքում եղել էր բաւարար հարստութեան տէր, անձնաւորութիւն, բայց այժմ երկերեսանի բախտի հարւածին էր արժանացել և այնպիսի աղքատներից էր, որոնց նմանը այդ բաղաբառում չէր գտնուում: Նա ունէր մի որդի, երեք աղջիկ և կինը, որոնց գրութիւնը նոյնպէս անտանելի էր:



3142. 84

Վարպետն իր նստած տեղը անվերջ հառաչներ էր արձակում, մտորում ու մտորում էր: Յաճախակի իր ծխախոտն էր վառում ու քաշում, որը կարծես միակ մխիթարիչը լինէր: Ծխախոտի ծուխը քուլա-քուլա վեր էր բարձրանում, նա էլ երևի փախչել էր ուզում այդ խրճիթից, որի մէջ աղքատութիւնն ու չքաւորութիւնն էր թագաւորում, որտեղ ընդմիջացաւն ու կարիքն է ներկայ գտնւել և վերջապէս որի անդամները ամեն անգամ ենթակայ են եղել զանազան հալածանքների ու կեղեքումների:

Խրճիթի միւս կողմը նոյնպէս կուշ էր եկել ցաւի ձեռքից Վարպետի հասակաւոր կիներ. նա էլ անվերջ հառաչներ էր արձակում. ձեռքը երեսին դրած յուզումների մէջ տառապում էր, չարիքի արմատն էր համարում բախտի իրենց անկողնակից լինելը:

Երեք աղջիկները, որոնցից մեծը հագիւ լինէր 17 տարեկան, նրանք էլ իրենց ծնողների նման «սեն առած» կծկւել էին և կարծես մի որևէ հրամանի էին սպասում, որ անմիջապէս կատարեն: Ճիշտ է, թէև նրանցից երկուսին դեռ այնքան էլ յայտնի չէր կեանքի դառն լինելը, բայց հետզհետէ նրանք էլ մտնում էին այդ շրջանը և ծանօթանում նրա չարի և բարու հետ:

Նրանց միակ որդին՝ երիտասարդ Գրիգորը, ցաւալի կերպով տառապում էր խրճիթի մի

անկիւնում դրւած կեղտոտ մահճակալի մէջ. նա հիւանդ էր, միանգամայն հիւժւել էր. յաղթանդամ մարմնի փոխարէն միակ չոր կմախք էր մնացել. աշխոյժ ու կայտառ, կարմրագոյն երեսի տեղ՝ մի դեղնած, լղար դէմք էր, որ նայողի մէջ վախ էր առաջացնում. փոխանակ ճարտար երիտասարդի, կրակոտ երևակայութեան ու պատանեկան յուզումնալից մտքերի, այժմ պառկել էր մի «անլեզու» արարած, որը նոյնիսկ խօսելու հնարաւորութիւնից էլ զրկւել էր, չէր կարող գոնէ իր սրտում դիզւած խորունկ վշտերը պատկերացնել: Նրա երեսից երբեմնակի կարծես արտայայտւում էին ծիծաղի նշոյլներ, բայց դրանք վշտի ծիծաղներ էին, որ մարդ արձակում է միայն այն ժամանակ, երբ իր սրտի վէրքը չի կարող երևան հանել, մրափում է անխօս և արհամարհելով կեանքն ու երջանկութիւնը, դուրս են թռնում վշտի ծիծաղները:

Դուրսը քամին միալար սուլում էր, կարծես լալիս լինէր անձարների դառն ու անողորմ վիճակը. նա մերթ ընդ մերթ անհանգստութիւն էր պատճառում խրճիթում կծկւածներին, խփում էր փոքրիկ լուսամուտի ապակուն և սուր վզգոց ներս արձակում:

Այս լուռ, մեռելային դրութեան ժամանակ յանկարծ խրճիթի դուռը ճռաց. կարծես մէկն ուզում էր ներս գալ, բայց չէր յանդգնում, ուս-

տի և սկսեց կամաց բաղխել. փոքրիկ աղջիկը դուրս վազեց ու ներս հրաւիրեց նորեկին: Ներս մտաւ մի գեղջուկ, վերջներով գլխարկը նրա միջից հանեց մի ծրար ու տալով Վարպետին, անխօս հեռացաւ:

Այս գործողութիւնը տեսաւ Գրիգորը մահճակալի միջից, և ճանաչելով նորեկին, մասամբ հասկացաւ գործի էութիւնը: Վարպետը ծրարն ստանալով կարգաց և հանգարտօրէն ասաց.

— Բարեգութ Աբրահամ աղան դարձեալ սպառնական նամակ է ուղարկել, որ ոչ ոքի տրտունջ չյայտնենք պատահած տգեղ երևոյթի մասին, եթէ ոչ, ամբողջ ընտանիքի կեանքը վտանգի կենթարկի:

II

Բարեգութ Աբրահամը իր զիրքն ու պատիւը այն աստիճան էր բարձրացրել ամբողջ քաղաքում, անունը համբաւել բարեգութ, որ շատ շատերը մի առանձին սրբութեամբ էին արտասանում այդ անունը, նոյն իսկ ըստ իրենց հայեցողութեան—յանցագործութիւն արած կլինէին, եթէ չտային նրա բարեգութ տիպոսը:

Բարեգութի համար այդ մի բառն ամեն ինչ էր,—և՛ կեանք, և՛ փառք, և՛ պատիւ ու երջանկութիւն: Նա չափազանց հպարտանում էր, երբ մէկից լսէր, որ իր հասցէին բարեգութ են ան-

ւանել: Միևնույն ժամանակ նա գաղտագողի պատժել կտար նրանց, որոնք համարձակէին նրա մասին վատ բան խօսել՝ կատարած չար գործերը երևան հանել:

Դեռ տարիներ առաջ, նրան դիմել էր մի ծերունի ողորմածութիւն հայցելու, բայց այդ բանը զայրացրել էր Բարեգութին և իր գաժան հարւածն էր ողորմացել խեղճ ծերուկին: Նա յանդիմանելով, որ ինքը երբէք «չունևորի չի սիրում», մի այնպիսի հարւած էր հասցրել, որ ծերունին բարձր սանդուխներից վայր ընկնելով իսկոյն անշնչացել էր: Սակայն այդ դէպքի մասին որևէ ակնարկ անողներին այնպիսի պատժի կարժանացնէր, որ իրենց օրում տեսած չլինէին: Բարեգութը իր մարդկանց սպառնալիքներով պատւիրում էր, թէ ով որ այդ մասին խօսք ունենար բերանում, իսկոյն և եթ նրա լեզուն կտրել, աչքը կուրացնել կտար: Եւ իրաւ, այդ դէպքը պատահեց երկուսի հետ:

Բարեգութ աղան ունէր և մեծ հարստութիւն. նրա կալւածները, փողերը օրէցօր բազմապատկուում, լցնում էին զանձարանը: Նա այն անձնաւորութիւններից էր, որ չէր թողնում փողը սնդկումը անշահ մնայ, այլ և վաշխառութեամբ տասնապատկում էր:

Բարեգութը փողի մէջ էր գտնում ամեն բան, յաճախ և փողով էր ծածկում իր կատա-

րած անպատուութիւնները: Սակայն այդ բոլորի հետ նա ունէր և հպարտութիւն: Հարուստներից գատ, բոլոր չքաւորներին ծաղրում էր, միշտ առարկելով որ՝ «եթէ լաւ մարդիկ լինէին, ինչո՞ւ են աղքատ մնացել»: Նա շունետորներին «հասարակ, ստորին» մարդիկ էր անւանում:

Եւ հէնց ինչպէս ինքն էր ասում «հասարակ աննշան մարդկանց հետ չխառնւելու համար» քաղաքից երկու վերստ հեռաւորութեան վրայ էր կառուցել իր հոյակապ շինութիւնը, որտեղից հազիւ էր պատահում, որ քաղաք յաճախէր իր սեփական կառքով: Այդ ժամանակ բոլորի ցանկութիւնն էր լինում նրա աչքին երևալ, քաղցր ու բարի խօսակցութիւնը լսել:

Փողովուրդն այսպէս սիրում ու յարգում էր: Ո՞վ գիտէր չար առաւելութիւնները, անյարգ բնաւորութիւնը, կեղծ սիրտը, փոքր հոգին, վատ արիւնը. մի խօսքով նրա ոչ մարդկային էութիւնը ո՞ւմ էր յայտնի, ո՞վ գիտէր նրա ինչ լինելը, կամ ո՞վ կարող էր նրա ներքին աշխարհը քննել. միմիայն արտաքին հարստութիւնն ու կեղծ բնաւորութիւնը բոլորին շացրել էր:

Կեղծաւորութիւնն ու նենգամտութիւնը այն աստիճան էր զարգացել նրա գլխում, որ ոչ ոք չէր կարող նրա մտքովն անցածը իմանալ: Նրա ամեն մի քայլը նախամտածւած էր և կիրաւոր ծէր առանց մի կէտ վրիպելու:

III

Վարպետ Յակոբը տարիներ առաջ իր միակ որդուն՝ Գրիգորին կարողացել էր տալ Բարեգուծ Աբրահամ աղայի հովանաւորութեան տակ, նրա հսկայ գործարանում աշխատելու:

Աղքատի բնիստ. ի՞նչ պիտի լինէր: Դեռ իր փոքր ժամանականից, քիչ կըթութիւն առած, հայրը տւել էր արհեստ սովորելու, որ հաց ուտի, բայց յետոյ ինչպէս տեսան, թանգ նստեց այդ տէնչը:

Բարեգուծը իր չար, կամակոր կառավարչի խօսքերին նայելով, առանց գործի խորը քննելու, արտաքսել էր Գրիգորին, առարկելով, որ մի այնպիսի անձնաւորութիւն է, որը նման է վարակիչ հիւանդութեան. ապականում է այնտեղ, ուր ոտք կգնի, խանգարում է այն համեստ, օրինակելի կարգը, որը մեծ փաստ է պատճառում ամենուրեք:

Սակայն գրանք անգուծ կառավարչի գաւազրութիւններն էին: Գրիգորը բարեխղճութեամբ և հարազատութեամբ միակն էր իր ընկերների մէջ, նա իր բոլոր պարտականութիւնները ճշտութեամբ կատարում էր:

Ի՞նչ էր հաղորդել կառավարիչը Բարեգուծին, ի՞նչ հնար էր գտել Գրիգորին անւանարկելու համար:— Սմեն անգամ, երբ առիթ է լի-

նում Բարեգութի մասին խօսել, նա անարգալից է վերաբերում, չի պատահում, որ նա արտասանէ «մարգասէր ազան, բարեգութ—գլխասէր ազան» և այլն: Միշտ էլ արհամարհել է Բարեգութի մեծութիւնը, նրա հարստութիւնն ու փարթամութիւնը:

Եւ այդ իսկ պատճառով Բարեգութ ազան հրամայել էր արտաքսել զբան և անւանել կողոպտիչ—աւազակ:

Սակայն ինչո՞ւ էր դաւադրում կառավարիչը. ի՞նչ էր ուզում այն անհատից, որը մի ամբողջ ընտանիք էր կերակրում իր նիհար ձեռքերով: Պատճառն այն էր, որ կառավարիչը լինելով հարբեցող ու անբարոյական անձնաւորութիւն, պահանջում էր բոլոր աշխատաւորներին անխտիր տէր և տնօրէն իրեն ճանաչել և որ զլիաւորն է՝ ոռճիկներն ստանալիս առկուս յանձնել իրեն, որովհետեւ եթէ ինքը կամենայ, չի թողնիլ նրանց աշխատելու:

Գրիգորը լինելով բազմամարդ ընտանիքի տէր, չկարողացաւ դիմանալ կառավարչի նորանոր պահանջներին, բոլոր յայտնեց բռնութեան դէմ, ու արտաքսւեց միանգամայն:

Բարեգութը հրաւիրելով իր մօտ Գրիգորին, զայրացկոտ կերպով ասել էր.—Աղքատի որդի, անխիղճ արարած, դու կողոպտեցիր իմ աւարը, ողորուկի նման անվերջ ծծեցիր իմ արիւնը և

այժմ էլ կամենում ես անպատիժ մնալ: Հարկաւոր է քեզ ձերբակալել, արդարութեան դատաստանին մատնել, որ կրես ծանր լուծը անբարըշտութեանդ համար:

Եւ իրաւ, իր ասածը կատարեց: Ամբողջ երեք ամիս նրան մաշեց բանտի խոնաւ նկուղներում: Առանց այն էլ նա մի թուլակազմ, նիհար, աշխատանքի ծանր բեռան տակ կռացած երիտասարդ էր: Մերթ իր ընտանիքի հոգան ու ցաւը, մերթ Բարեգութի կատարած անխիղճ վարմունքը և մերթ էլ կամակոր կառավարիչի լարած դաւադրութիւնները նրան հասցրին դառն վիճակի: Նա ամեն կողմից ճնշւել էր, որի հետեանքը եղաւ հիւանդութիւնը:

Եւ նա այժմ բանտից ազատւած, անկողնում տառապում էր. միւս կողմից նրան մաշում էր ընտանիքի աղքատութիւնը:

Գրիգորի ամբողջ ընտանիքը մարդկանց ուշադրութիւնից զրկւել էր: Նրա անդամները ոչ պլինդ երես ու հնարաւորութիւն ունէին հարեւանից ողորմութիւն հայցելու, ոչ էլ զիւթական զօրութիւն առանց կերակրի ապրելու:

Ի՞նչ էր մնում անել նրանց: Ընտանիքի հայրը նոյնպէս չէր կարող եգիպտական ծանր աշխատանքի տակ մտնել, ծերացել, ֆիզիքական ոյժերը ջլատել էր. անբախտ հօր վիճակն էր ստանձնել իր վրայ:

IV

—Մի քիչ ջնւր... հազիւ հազ արտասանեց Գրիգորը մահճակալի միջից: Նա ամբողջ երկու օր է, ոչինչ չէր կերել. ցաւը նրան ճնշել էր մինչ այն աստիճան, որ հնարաւորութիւն չուներ խօսելու: Իսկոյն շուր բերին, Գրիգորը թէև կամենում էր խմել, բայց չյաջողեց, ուժասպառ ձեռքից շուրն վայր թափեց:

Մինչ Վարպետը յանդիմանում էր որդուն, թէ շուր հարկաւոր չէ գործածել, վնաս կպատճառէ, յանկարծ դուռը բաղխեցին, կարծես կամենում էին յարձակում գործել այդ խրճիթի դժբախտ բնակիչներին վրայ: Չանցած մի րոպէ, ներս մտաւ այլակերպ տեսքով, ցեխոտ շորերով մի մարդ, որը չափազանց արբած էր, նոյնիսկ չէր կարող կանոնաւոր խօսել: Նա զլորւելով ներս ընկաւ ու բղաւեց.

—Ապա ես... մարդկանց այն աստիճան կը պատժեմ, որ մոլորւեն. ճանաչում էք ինձ...

—Ի սէր Աստուծոյ, հեռացիր մեզանից.— աղերսում էր Վարպետը, որ մի գուցէ դարձեալ փորձանք չբերէ իր խեղճ ընտանիքի զլխին:

—Ես... կանեմ ամեն ինչ...

—Հեռացիր մեզանից, աղաղակեց Գրիգորի մայրը արտասուալից ձայնով:

—Բաւական է,— արտնշաց Գրիգորը տեղից:

—Ես ձեզ կսպանեմ... ես կառավարիչս...

—Այո, դուք կարող էք ամեն բան անել, որովհետև Բարեգութի աջակցութիւնը ձեզ համար ամեն րոպէ պատրաստ է:

—Լուր, Վարպետ... քեզ ցոյց կտամ:

Նա վրայ հասնելով կամեցաւ Վարպետին խփել, բայց այնքան ոյժ չէր մնացել, որ կարողանար ի կատար ածել իր վայրագութիւնները, և փուկեց գետին:

Վարպետը և թէ իր ընտանիքը չգիտէին ինչ անել, որպիսի դիրք բռնել, որ թակարդից անգտուեն, Բարեգութի ծանր հարւածներին ու ճնշումներին չարժանանան:

Ցաւերի վրայ մի վէրք էլ աւելացաւ: Ի՞նչ անել այս դառն րոպէին:

Անցաւ կէս ժամ: Դրսից երբ որևէ ձայներ էին լսում, Վարպետը սոսկում, կարծում էր՝ թէ իր վրայ յարձակում գործեցին: Եւ այժմ էլ լսեց կռքի ձայն, նա հասկացաւ գործի էութիւնը ու ամբողջ մարմնով դողաց:

—Սպասեցէք դուք, աւազակ անխիղճներ. ցոյց կտամ հիմա ձեզ ամեն բան. լսեց մի յանդուգն, հրամայողական ձայն: Եւ անհա դռան շէմքում կանգնեց Բարեգութ աղան իր տասնեակ օգնականներով ու թիկնապահներով, որոնք եկել էին Վարպետին ու իր ընտանիքին պատժելու:

— Խղճացէք արևորութեանս, գլխացէք բազմակարօտ ու խեղճ ընտանիքիս. աղերսելով առաջ անցաւ Վարպետը և աղիողորմ արտասուքով կամենում էր Բարեգութի խիղճը շարժել, հաւատացնել, որ իրենք ոչնչից տեղեկութիւն չունին. բայց սրտեղից, Բարեգութի սիրտը վաղուց ապառաժ էր գարձել, և երկրորդ, նրան չար միտումներից զրևած խաբել էր իր թիկնապահ Մինասը, իբր թէ կառավարչին Վարպետը գիտամամբ տարաւ իր տուն. այժմ սրտեղից կլսէր որևէ աղերսանքի:

— Վերցրէք մեր կառավարչին և գրէք կառքի վրայ, բայց նախքան վերցնելը նայեցէք նրա հարուստ գրպանը, ստուգեցէք դարձերը: Առաջ անցիր, Մինաս, հրամայեց Բարեգութը իր թիկնապահներին աւագագոյնին:

Մինասը մօտեցաւ ընկածին, երկար արնատղելուց յետոյ գլուխը շարժելով ցաւակցաբար ասաց՝ չորս կողմը նայելով.

— Այս կողմ՝ նայեցէք, ամբողջովին թալանել են խեղճին:

— Էաւ, ուրեմն Վարպետը կողոպտել է մեր կառավարչին: Նրա գրպանից հանել է ոսկի ժամացոյցը և փողերը. ես երաշխաւորում եմ, որ նրա մօտ անապին գումար կար:

— Հաւատացիր տէր, տեղեկութիւն չունիմ, խղճաւ անկողնում տառապողին, որ տարիներ

շարունակ քո դռանն է ծառայել:

— Բաւական է Վարպետ, քեզ նման կեղծաւորները ինձ չեն կարող խաբել: Դառնալով գէպի իր մարդիկներից մէկին. — Սհարոն, վկայ եղիր որ մեր կառավարիչ Միքայէլ Սահակեանին, Վարպետ Յակոբը խաբէութեամբ տարել է իր տունը և արբեցնելով կողոպտել է նրա ոսկի ժամացոյցն ու փողերը: Այժմ էլ չի խոտովանում իր յանցանքը:

— Հաւատացիր արևորիս, մարդասէր Բարեգութ, նա արբած եկաւ և մեզ սպառնալիքներ կարգալով կամենում էր խփել, որ ուժասպառ գետին գլորւեց:

— Ամեն բան քո ձեռքովն է կատարել, ես մանկութիւնից քեզ ճանաչում էի իբրև աւագակի. աւելացրեց թիկնապահ Մինասը, մերթ այս ու այն կողմ նայելով, երևի խրճիթը խուզարկելու դիտաւորութեամբ:

Արբած, կերպարանափոխւած ստոր արարածին վերցնելով գրին կառքի վրայ: Բարեգութ աղան ևս պատրաստուեց գուրս գալու: Նա մօտեցաւ Վարպետին՝ օձիքից բռնելով քարշ տուեց ու ասաց.

— Սա քո վրայ չափազանց թանգ կնատի: Ես վաղն անսպայման կներկայանամ ոտիկանատուն և իմ յափշտակւած աւարս յետ կը պահանջեմ:

V

—Ի՞նչ է լինելու մեր դառն վիճակը. մըր-
մնջաց Գրիգորը, — արժէ՞ արդեօք այս ողբալի
պայմաններում ապրել ու սկսեց դառնագին հե-
կեկալ, տապակել ցաւի ձեռքից:

—Ի հարկէ չարժէ, նոյն իսկ սա մի տա-
ժանակիր աշխատանք է, որ ամբողջ ընտանիքով
քաշում ենք: Ի՞նչ է անելու այժմ անխիղճ Բա-
րեգութը, արդեօք իրագործելու իր կազմած
անտեղի ծրագրները. ասաց Վարպետի կինը
սոսկումով:

—Ոչինչ, ասաց Վարպետը, թող ներկայա-
ցնէ, այդ ևս կտանենք: Անցեալ անգամ կառա-
վարիչը Բարեգութի ձեռքով մեզ դժբախտացրեց,
իսկ այժմ թիկնապահ Մինասն էլ նոյն է կըր-
կնում իր նպատակին հասնելու համար:

—Բայց ինչո՞ւ տանենք. դարձեալ հեկեկաց
Գրիգորը ու խոր հոգոց քաշեց:

—Այո, պէտք է տանենք որդիս, որովհետև
մեզ պատահել են դիմակաւորւած բարեգութ-
ներ, անխիղճ, կաշառակեր ու դաւադիր կառա-
վարիչներ, սաոր ու անբարոյական ծառայող-
ներ: Տանենք պէտք է, որովհետև աղքատ էինք
և ոչ հարուստ, աղսիւ էինք, և ոչ անբարեխիղճ,
անկաշառակեր էինք, և ոչ ուրիշի աշխատանքի,
քրտինքի պտուղը վայելող: Ու՞մ ենք վնաս հաս-
ցրել, սրի տունն ենք քանդել. նոյն իսկ ամրա-


պինդ երես չենք ունեցել մեզ կեղեքողների
դէմ բողոքելու:

—Պէտք է խոնարհութեամբ տանել ամեն
ինչ, մեր ճակատագիրը այդ է եղել—աւելացրեց
կինը.— Այս բոլորը Նախախնամութեան կարգա-
դրութիւնն է և մենք չենք կարող Նրա դէմ
արտունջ յայտնել: Մարդիկ ստեղծւած են ամեն
բանի համար. նրանք ենթակայ պիտի լինեն և՛
հալածանքի և՛ տանջանքի և՛ ուրախութեան:
Մինչև էակը տկարութիւն տեսած չլինի, չի կա-
րող առողջութեան յարգն իմանալ. նմանապէս
բանի դժբախտութեան չենք հանդիպել, ուրա-
խութեան յարգը չենք կարող գիտենալ: Վերջա-
պէս պէտք է տանենք այն ամենը, ինչ Տէրը
մեզ համար նախախնամել է:

—Տանենք, բայց վերջը. ասաց Գրիգորը,
դառնալով անկողնու մէջ:

—Վերջն այն կլինի, որ այս բոլոր դժու-
րութիւնները կվերջանայ մեր մահով: Մահը մի
սահման է մարդկանց կրած վշտերի համար:
Մենք այս ամենը կթափենք, կթողնենք ապրող-
ներին, երբ ճանապարհւելու լինենք յաւիտենա-
կան կացարան:

—Ո՛հ, մահւան մասին մի խօսէք, ասաց
Վարպետի աղջիկը.— մահը թող մեզանից հեռու
ապրէ, որովհետև առանց այն էլ մենք շատ հո-
գեհան նեղութիւնների ենք հանդիպել:



314284

—Հոգս չէ, մահն աւելի լաւ է, քան դառնազին կեանքը:

—Ինչո՞ւ:

—Որովհետեւ կեանքը մի անուելի պայքար է, մէջ մտաւ Վարպետը.— ով կարող է կուել, յաղթող հանգիստանալ, ուրեմն նա ամենայն իրաւամբ իրաւունք ունի ապրելու, վայելելու նրա երջանիկ կողմերը, իսկ ով անկարող, ուժասպառ ընկճւում է կէս ճամբին՝ չգիտանալով նրա գոթխային հարւածներին, իմ կարծիքով այդ յաղթւած բազմակարօտ խեղճին մահը հեզնանքով իր գիրկին է առնում, որի նմանն էլ մենք ենք այժմ:

Նրանք այս գիշերային խաւարի մէջ տալիս ու առնում էին զանազան թերի մտքեր: Նրանց մեծ վիշտ էր հասել. իրենց միակ ընտանիքի պահապանը այսօր տառապում էր, թողնելով իրենց գոյութեան կուում անտէր անպաշտպան: Նրանք հոգեպէս ևս անմխիթար էին, մարդկանցից շատերը խորշում էին իրենցից, համարում էին «Բարեգութի թշնամիներ»։ աշխատում էին հեռու մնալ, ոտք չգնել այդ շէմքում: Քաղաքում բոլորն առարկում էին, որ յիշեալ ընտանիքը թէ նիւթապէս և թէ բարոյապէս փրաս է հասցրել Բարեգութին ու արժանացել նրա արդար դատին: Արհամարհել են նրա մեծութիւնը, յանդգնել կամքին, կողոպտել կառավարչին:

Եւ իրաւ, որ հողածինը կյանդգնէր խեղճերին մօտենալ Բարեգութի անից. ով կցանկանար, որ նրանց հասած դժբախտութեան շարունակութիւնը իրեն գլուխը փաթաթէր: Միմիայն մի ընտանիք կար, որը միշտ էլ նիւթական օգուտ և բարոյական հոգատարութիւն էր տանում Վարպետի ընտանիքին:

Ոչ բարեկամներ, ոչ ազգականներ և ոչ էլ մօտիկ ընկեր երկիւղից չէին աջակցում «սեով» ապրողներին. Բարեգութի սարսափից աշխատում էին հեռու մնալ. աշխարհի խորթ գաւակներին միայնակ թողնել կրելու իրենց տանջալից օրերի շարանը:

Այսպէս ամենքից մոռացւած ու արհամարհւած ընտանիքը գիշերով խորը ընկղմւած տառապանքների ու մտքերի անհուն ովկիանը, չէր կարողանում իրեն հաշիւ տալ տեղացող դժբախտութիւնների համար:

Այս միջոցին դրսից ազգականներ լաւեցին ու ամուր կերպով դուռը բաղխեցին:

—Ո՞վ էք,— հարցրեց Վարպետը ներսից:

—Շուտ արա, բաց, ոչինչ թագցնել չես կարող:

—Ի՞նչ էք կամենում:

—Քեզ հրամայում եմ բաց արա, ծերուկ: Այս խօսքերի հետ մի հարւած հասցրին կիսաշէն խրճիթի դրանը, որ քիչ էր մնում պոկէր տեղից:

Բացեց դուռը դողդողջուն ձեռքերով ու առանց մի խօսք արտասանելու խաւարի մէջ ըսպասում էր նրանց Վարպետը: Եկողները ճանաչելով նրան՝ դուրս հրաւիրեցին և իրենց հետ առնելով, կորան խաւար մթութեան մէջ, թողնելով մնացածներին տարակուսանքներով լցւած:

VI

Հասցրին Բարեգութի շինութեան մէջ...

— Ողորմելի, խոստովանիր յանցաքդ. եթէ չես կամենում անել այդ, քեզ համար պատտրաստ կլինի տանջանքների ամենասուկալին: Ինչ որ չես կարող վսեմափայլ Բարեգութի աչքից վրիպել քո յանցագործութեամբ: Չես կարող նենգամտութեամբ մեզ հաւատացնել, որ ոչընչից տեղեկութիւն չունիս: Յանցագործութեան հերոսը դու և քո որդին էք, որը կեղծ հիւանդ է ձեացել: Ուզում ես խոստովանիր, չես ուզում միևնոյն է, պարտական ես առաջի Աստուծոյ և Բարեգութին. երկու դէպքում էլ պիտի վճարես գողացած իրերը: Եթէ ոչ կտանջես, խղճիդ ձեռքը գերի կդառնաս, մթթէ դու չես հասկանում, որ աւագակութեան վախճանը անտանելի կլինի: Ի՞նչ խղճով պէտք է հանգիստ առնես երեկոները, երբ ներքին աշխարհդ խռովութեան մէջ է գտնւում: Գիշերները քեզ կպատեն խոնարհիւթ երազներ, դու կտանջես աներևոյթ

չարքերից, որովհետև յափշտակիչ, աւագակ, խաբեբայ ու նենգամիտ ես:

Այսպէս խօսեցին ու զգիշերին Վարպետին շրջապատող թիկնապահները, կարծելով թէ իրենց խրատները կարող է խոստովանեցնել տալ նրան իր չկատարած յանցանքը:

Իե՞տ ցերեկ էր, որ Բարեգութը հրամայեց Վարպետին բերել իր մօտ և խօսք առնել բերանից: Սակայն փնասն ինչ, որ թիկնապահները գիշեր ժամանակ բերին նրան և սկսեցին ըստ իրենց հայեցողութեան դատել:

Վարպետն իրեն յատուկ տոկունութեամբ տանում էր այդ նախատինքները: Նա մերթընդ մերթ վեր էր բարձրացնում գլուխը և նայում շրջապատողներին. բոլորը արհամարհական խօսքեր էին արտասանում: Նրանք ձեացնում էին, թէ կխղճան իրեն, չեն ուզում, որ Բարեգութը դարձեալ զայրանայ:

Սակայն ինչը խոստովանէր: Նա մտածում էր, որ եթէ ունենար հարստութիւն, կտար, իրեն կազատէր անգութների ձեռքից, բայց այդ էլ չկար, ուրեմն տանել խոնարհութեամբ ամեն ինչ, ամեն բան, որ անտանելի էր:

— Խոստովանիր, — ձայնեց թիկնապահ Մինասը:

— Ի՞նչ խոստովանեմ:

— Ի՞նչ յանցանքը:

— Յանցանք չունիմ:

— Գործել ես, անգութ:

— Հաւատացնում եմ, ոչինչ չգիտեմ:

— Կրկնում եմ, խոստովանիր:

— Երբ մեղք չեմ գործել...

— Ես քեզ ցոյց կտամ. — սպառնաց Մինասը, — թէ ինչ է նշանակում մեր կառավարչի նման անձնաւորութեան կողոպտել ու փառաւոր կերպով ձեռքը խղձին դնելով ուրանալ:

— Հաւատացնում եմ, իբրև անարատ մարդու հաւատ ընծայիր ինձ: Հրաւիրիր կառավարչին, պատրաստ եմ նրա ամեն մի հարցին պատասխանելու, միեւնոյն ժամանակ ինձ արդարացնելու: Ես բոլորը կպատմեմ, կպատմեմ այն, ինչ անցել է իմ գլխով: Ի՞նչ էք ուզում ինձանից, երբ ոչնչից տեղեկութիւն չունիմ: Դուք ձեր բանն ու գործը թողած, գալիս էք իմ թշուառութիւնների թիւը բազմապատկելու, ապրելիք օրերս թունաւորելու, բայց այդ էլ փոյթ չէ ինձ համար: Կապրեմ այն կեանքով, որը մաղձոտ ու ողբերգալից է, որովհետեւ ինձ տիրող շրջապատը լցւած է այնպիսի մարդկանցով, որոնք նման գիշատիչ թռչունների, պատրաստ են ամեն ըոպէ հարստահարելու իրենց ընկեր արարածներին:

— Դեռ կը յանդգնես ճշմարտութիւնից խօսել և մեզ անպատուել:

— Համեցէք Վարպետ, ահա և պ. կառավարիչը, խօսիր նրա դիմաց: — Ասաց Մինասը, երբ ներս մտաւ կառավարիչ Միքայէլը:

— Այժմ դու այստեղ ես գտնուում ծերուկ, երևի յափշտակածդ իրերը յետ ես բերել:

— Ոչ, փոխանակ կողոպտածը յետ բերելու, չի էլ խոստովանում:

— Ես քեզանից պահանջում եմ, ծերունի, ցոյց տուր իրերի թագստեան տեղը, թող գնան և բերեն: Խղձում եմ արևորութեանդ, կազատեմ քեզ սպառնացող վտանգից, կհանեմ անելանելի վիճակից, եթէ միայն խոստովանես:

— Բազմիցս անգամ արդէն ասացի և այժմ էլ կրկնում եմ...

— Լաւ, այդ գէպքում հարկաւոր է քեզ արիւն-քրտինքի մէջ մտցնել, որպէսզի զգասք ողորմելիութիւնը, սթափւես այդ ոչ մարդկային վիճակից և ամեն բան զղշաս:

— Այդ ևս թողնում եմ ձեր կամքին. արէք այն, ինչ հետու է ձեր խղձից, ճնշեցէք, որքան ձեր բազուկներում ոյժ կայ. դրանցից երես չեմ դարձնում, որովհետեւ ամեն ինչ ձեր կողմն է, ամեն մի զօրութեամբ դուք լցւած էք:

— Դեռ տեղիք ես տալիս խօսելու: Մինաս, տար սրան և փակիր ներքնայարկում, մինչև որ սթափւի իր նախապաշարումից և խոստովանելով յետ բերի իրերը:

Առաջ անցրին Վարպետին, տարան շինութեան ներքին յարկը, մտցրին մի լոյսից ու օդից գուրկ սենեակ, ուր մի հատիկ կոտրւած սեղան կար և որին Մինասը պատւիրեց չմօտենալ, որովհետև կարող է ջարդել: Միևնոյն ժամանակ նա խրատեց, որ շուտ խոստովանի, մի կերպ յետ բերէ գողացածը, եթէ ոչ հետևանքը անպայման վատ կլինի:

Ու հանգիստ սրտով դուրս եկաւ, դուռը փակելով վրայից:

Ազի արտասուքի դառն կաթիլները ցայտեցին վշտակիր, բազմահալած, կեանքի բովի մէջ խորոված ալեորի աչքերից և կնճոռոտ ճակատն ու դէմքը մի անգամ ևս մոայլեց: Նրա երեսի վրայ սփռւած սպիտակ մագերի տակից նշմարւում էր դեղնագոյն, հիւժւած երեսը, որ կարծես բնաւ կենդանի մարդու պատկեր չունէր, այլ գերեզմանից, «նեղ» կեանքից փախած հողածնի սուեր լինէր:

Մոր հոգոցների և հառաչների տարափի տակ ընկղմեց խոճրը մտքերի անհուն ովկիանը և ապշածի նման արձանացած իր տեղում, մտորում էր: Մի դառն միտք էր նրան պաշարել. իրեն առաջարկում են խոստովանել, բայց թէ ի՞նչ խոստովանել:

Ու նա իր կորած բախտը, խաւարած աստղըն էր սրոնում, որ այնքան էլ հեշտ չէր գտնել:

VII

«Աստծու սրհած գառը դայլը չի ուտիլ»: Առաւօտեան վաղ Մինասի յարուցած միջնորդութիւնից յետոյ, Բարեգուլթը հրամայեց արձակել Վարպետին: Սակայն ինչո՞ւ էր միջամտում: Նախ Մինասին քաջ յայտնի էր ծերունու անմեղութիւնը և երկրորդ՝ նրանից խօսք էր առել, որ երբ ազատւի այդ որջից, իր մեծ աղջկան իրեն կնութեան կտայ:

Սյապիսով՝ Բարեգուլթը կամենում էր պատժել, որովհետև դէպի իրեն անյարգալից են վերաբերել. կառավարիչը կամենում էր իր աւարը յետ ստանալ, իսկ Մինասը հանգամանքից օգուտելով՝ երկու կողմից որս էր ձեռք գցում: Սակայն ոչ մի բանից տեղեակ չէր Վարպետը:

Գիշերւայ ասնջանքն ապրելուց յետոյ, առաւօտեան իր սև օրն անիծելով դուրս եկաւ և դիմեց իր քամբախտ խրճիթը:

Վրայ վազեցին աղջիկներն ու կիներ, երբ նա ներս մտաւ: Նրանց հարց ու փորձին չէր կարող լիովին պատասխան տալ, իր սովորական «անի ու վնիսն» էր քաշում:

Քաղաքն սկսեց շարժել. ամեն ոք իր աւորեայ հոգսերի յետևից էր վազում. ամեն մի մարդ իր անելիքն էր ձեռք առել: Կանայք ևս անային ցաւերն էին հոգում: Բարեպաշտ ծե-

բունինները եկեղեցի էին շտապում աղօթելու իրենց գերդաստանին բախտաւոր-երջանիկ օրեր: Սրա հակառակն էին տարաբախտ թշւանները: Նոյն իսկ քահանան երես էր դարձրել Վարպետից, մեղք էր համարում նրան եկեղեցի յաճախել, որովհետեւ Բարեգութին հակառակ է գնացել, բայց Վարպետը նշանակութիւն չէր տալիս, իր միակ մխիթարութիւնը Աստծուն աղօթելու մէջ էր գտնում: Քահանան ևս հերթին կամենում էր Բարեգութի աչքը մտնել իր արարքով, մանաւանդ, որ երէցիկինը նրա եղբօր աղջիկն էր: Քահանան միշտ Բարեգութի համապարանքը վայելել էր:

Ամեն մէկի հալածանքն իր պատճառն ունէր. բոլորը ցանկանում էին ապաբախտներին հալածել, որպէսզի Բարեգութի մօտ վարկ հաստատեն: Նա հարուստ էր. ամենը կցանկային նրան երկրպագել, նրա փողին պատիւ տալ:

Առաւօտեան ժամերգութիւնից նոր էր վերադարձել Վարպետը տուն, որ իր յետեից ներս մտաւ բարձրահասակ, լիք կազմաւածքով, շիկագոյն մազերով մի երիտասարդ ու ասաց.

— Բարեկամներ, յիշեցէք ձեր պարտքը, չէք ուզում վճարել:

— Դարձեալ այդ պարտքը...

— Այո, պարտքը. վճարեցէք:

— Սպասեցէք մի քանի օր էլ. — առաջ ան-

ցաւ Վարպետը. — Զէ որ դա մեր պարտքը չէր: Կառավարիչ Միքայէլն էր արել այդ ծախսը և պատւիրել մեզանից ստանալ: Սակայն ինչեիցէ, խնդրում ենք սպասիր մի քիչ էլ:

— Քիչ էլ. — ծիծաղեց երիտասարդը: Քչերը բազմապատկելով կշատանան. ուրեմն ասացէք շաա սպասենք:

— Խնդրում եմ...

— Լաւ, ապա Գրիգորի առողջութիւնը. ափսոս... եթէ նա չմեռնի լաւ կլինի. նա իմ ամենալաւ առևտուր անողներից մէկն էր: Առաջ գալով դէպի մահճակալը, կամենում էր խօսել, որ Գրիգորը ճանաչելով հարցրեց.

— Յովհաննէս...

— Եկել եմ ձեր պարտքը ստանալու:

— Պարտքը... մրմնջաց Գրիգորը:

Յովհաննէսը երևի խղճաց անպաշտպան ընտանիքին ու հեռացաւ, խոստանալով, որ անպայման կգայ, նրանց չի մոռանայ...

VIII

Անցան օրեր... անցան տանջանքի ու ճնշումների շարանից... անցան, գնացին և տեղի տւին նորանոր թշւառութիւնների...

Քամին միալար վզովում էր. իր ողբոցով ու անհաճոյ սուլոցով մարդու ախանջ էր խլացնում ու կարծես կամենում էր տանել իր հոսանքի

հետ, ճնշել նրան իր- անուելի ոյժով:

Քամուց ազատ մնալու համար իր պատա-
ռոտած վերարկուն էր փաթաթել ծերունի ճա-
նապարհորդը և շապուժ էր բռնեց առաջ հաս-
նել: Նրա քայլերը թէև յուսահատական էին,
բայց յաճախ ոյժ էին ստանում և անդուլ առաջ
անցնում: Նա մտքերով տարած արագանում էր
և որքան ուրախացաւ, երբ իր զիմացը նկատեց
մի հսկայ—հոյակապ շինութիւն: Նրա հաստա-
տուն պատերը հեռից ցոյց էին տալիս իր մէջ
բնակողի էութիւնը, ապացուցում էին, որ այդ
հսկայի տէրը անշուշտ տիրած կլինի աշխարհի
ամենաթանգ վայելքներին և ապրում է այնպի-
սի կեանք, որ դեռ շատ-շատերը զուրկ են:

Բաղխեց հայաթի դուռը. գամբոնները անա-
գին որոտմունք բարձրացրին: Պահպանը բացեց
դուռը և ներս տարաւ ծերունուն շինութեան
այն մասը, որտեղ բնակուժ են աղայի բազմա-
թիւ ծառաներն ու սպասաւորները:

Նա խնդրեց ծառային իմաց անել Բարե-
գութին իր ժամանումը: Հինգ բոլորից յետոյ
նրան հրաւիրեցին ներս: Ծերունին համեստու-
թեամբ առաջ անցաւ դէպի շքեղ կահաւորւած
սենեակը: Աչք էին շարժում դահլիճի զարդա-
րանքները, փարթամութիւնն ու շոռայութիւնը:

Որքան զարմացաւ Վարպետը, երբ տեսաւ
Բարեգութին անկողնու մէջ ցաւով տապալւե-

լիս. միանգամայն ապշեց: Հիւանդը տեսնելով
ծերունուն, կարծես իրեն թեթևութիւն զգաց և
բացականչեց.

—Բարի, բարի, արդար ծերունի. նստիր,
խոստովանեմ պէտք է իմ սխալանքները, որ
անչափ տանջեցի ձեզ:

—Բանը ինչու՞ն է, Բարեգութ:

—Ո՛հ, Վարպետ: Քեզ հրաւիրել եմ յայտ-
նելու այն, ինչ որ լսեցի ես սրանից մի ժամ
առաջ այն ընտանիքի ծերունուց, որը մի ժա-
մանակ օգնելիս է եղել ձեզ, թէ նիւթապէս և
թէ բարոյապէս: Ես միանգամայն կուլ եմ զնա-
ցել իմ անբարոյական մարդկանց ձեռքով: Իմա-
ցայ ամեն ինչ... Եւ այժմ արդարանում են իմ
այն կասկածները, որ ես ունէի դէպի քո անձ-
նաւորութիւնը, նրանց քեզ անւանարկելու վե-
րաբերմամբ: Յիշում եմ, որ քեզ տանջել եմ
անտեղի: Անիրաւները իմ ոյժով ձեզ ճնշել
են իրենց վրէժն առնելու համար...

Իսկոյն և եթ կպատւիրեմ արտաքսել նրանց
իմ գործից. շարաշար պատժի ենթարկել թէ
յանդուգն կառավարչին և թէ Մինասին. վաղն
անպայման ի կատար կածեմ իմ ծրագրները
դէպի երկու նենգամիտները...

Բայց այժմ խիղճս ինձ տանջում է, ներ-
քին աշխարհս խռովութեան մէջ է, որովհետև
ես այժմ լաւ հասկացայ, որ իմ վարմունքը

միանգամայն անտեղի, դատապարտելի էր. չէի քննել գործի խորը. երկու ծառայողներս լաւ մբռնելով իմ թոյլ կողմերը, աշխատեցին օգուտ քաղել, — կեղծ տեղեկութիւններ հաղորդել, թէ անարգալից են վերաբերում զէպի ինձ: Կառավարչին արբեցնելով ձեր տանն էր բերել Մինասը և հէնց ինքն էր եղել Միքայէլին կողոպտողը ու դրա համար ուզում էր ձեր վզովը փաթաթել: Մի խօսքով նրանք իմ ձեռքով տանջել տւին ձեզ...

Ինձ տանջում է թէ իմ հիւանդութիւնը և թէ ձեր անմեղ լինելը:

Ուստի և այժմ կարգադրում եմ բժիշկ հրաւիրել Գրիգորի համար, անյապաղ առողջացնել և իմ գործարանում կառավարչի պաշտօն վարել... վարել աւելի վարձատրութեամբ:

Ճիշտ է, Բարեգութը լսել էր այդ ամենը, բայց այնքան էլ հաւատ չէր ընծայում, ուստի վճռեց կանչել Վարպետին և յայտնել այդ ամենը ու մտքում զրեց Գրիգորին առողջացնել, իր գործարանում աշխատեցնել և կառավարչից գողացած իրերի տեղ հաշուել, սակայն այդ ծածուկ անել այժմ. ոչ Վարպետին յայտնել դրա մասին և ոչ մինչև վերջը կառավարչին:

Վարպետի սիրտը լցւեց անհուն ուրախութեամբ և Բարեգութին շնորհակալութիւն յայտնելով զէպի տուն գիմեց աւետելու այդ լուրը:

Վարպետը չէր կարողանում իրան հաշիւ տալ, թէ որքան պիտի ուրախանայ իր ընտանիքը լսելով այս ուրախալի լուրը, որը գալիս էր իրանց փրկելու սոսկալի վիճակից:

Նա անհամբեր եերս մտաւ իր խրճիթը և ասաց.

— Երջանիկ ենք սրանից յետոյ. վերջապէս մեր խաւար աստղը փայլեց, մեր կորած բախտը ժպտաց: Սրանից յետոյ ապահով կը լինենք:

Ոչ ոք տեղից չշարժւեց:

— Ի՞նչ էք կծկւել: Գրիգորը հէնց առողջանալու պէս Բարեգութի մօտ պիտի մտնէ կառավարչի պաշտօնով... Մեծ բախտ էր, որ մենք արժանացանք: Այժմ էլ բժիշկը գալիս է առողջացնելու...

— Սրանից յետոյ ոչ բժշկի կարիք ունինք և ոչ էլ բախտաւորութեան: Անմխիթար կեանքը մի անգամ ևս ցոյց տւեց իր թոյն լինելը... Թող սրանից յետոյ փուլ գայ աշխարհը իմ գլխին, թող իմ մայրական սիրոյ հուրը այրէ իմ սիրտը. թող ես ամեն բանից բախտահալած լինեմ. այլևս ինձ համար գոյութիւն չունի ապրելու բախտ ձեռք բերելու անչը, քանի որ իմ միակ Գրիգորը վախճանը գտաւ, մահը նրան առաւ իր սառն գիրկը. քանի որ նա էլ չի ապրելու, էլ գոյութիւն չի ունենալու, թող կործանւի և իմ տանջալից կեանքը...

Մեռան... բացականչեց Վարպետը ու վրայ վազելով՝ բոլորն ընկան անշունչ դիակի վրայ:

Այս դժբախտ ընկերին դրսում աղաղակներ բարձրացան: Երեք հոգի իրար յետևից ներս մտան և նրանցից առաջինն ասաց.

—Քիչ էլ, քիչ էլ, ահա ժամանակը լրացել է, չէ՞ք ուզում ձեր պարտքը վճարել:

—Վարպետ, ես այն Մինասն եմ, որ քեզ ազատեցի դառն, տանջալից ընկերից: Յիշում ես այն երեկոյ, որ դու խոստացար քո աղջկան ինձ տալ, երևի չէ՞ս կամենում պարտքդ կատարել:

—Փողերս եմ պահանջում, փողերս: Տւէ՞ք, եթէ ոչ, վատ օրի կհասցնեմ,—ասաց յանդուգն կերպով կառավարիչ Միքայելը:

Սակայն տեսնելով նրանց հասած դժբախտութիւնը, Գրիգորի ցաւալի մահը, զղջացին և գրուխները կախ գցելով դուրս եկան, նոր միայն մտաբերեցին, որ իրենց գործը ոչ մի կապ չունի դժբախտ ընտանիքի հետ և դուրս գալով սկսեցին իրարից ուզել իրենց պահանջելիքները, որովհետև կառավարիչն իմացաւ որ իրեն կողոպտողը Մինասն է եղել, իսկ Յովհաննէսը նոյնպէս գիտէր, որ պարտքը կառավարչինն էր:

Իսկ Վարպետը թաշկինակն աչքերին դուրս եկաւ քահանային իմաց տալու, որն այս անգամ բարի գտնւեց, չմերժեց ալևորի խնդիրը:

10 2

ԵՕ	№ 290/3
ՎՄ	
48	ԱՊ

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

«Մանուէլ» (վէպիկ)
 «Հայրենիքի կարօտը» (պատկեր)

Գ Ի Ն Ն Է 10 Կ Ո Պ.

Դիմել՝ Александрополь, типография «Ширак»
 Карапету Бурчақлянъ.

Գումարով գնողներին լինում է ղեղջ:

«Ազգային գրադարան»

 NL0332131

24492